

Գառնիի համայնքապետարան

ՆԱԽԱԳԻԾ

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2022 թվականի N ____ Ն

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածի պահանջներով, **ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի <<ԳԱՌՆԻ ԳԱՐԴԵՆ>> ՍՊԸ-ինստեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի 07-026-0117-0056 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 0.4915 հա մակերեսով գյուղատնտեսական վարելահող հողատեսքը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության՝ դիտակետ և օժանդակ շինություններ կառուցելու նպատակով:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության և փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ